Ա. ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ՄԱՏՆԶՈՒԹՅԱՆ» ԱՌԱՍՊԵԼԸ

Դ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արևմտահայ նշանավոր գրող, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Արփիար Արփիարյանն ապրեց լուսն գեղերուսներով լի կյանք, ստեղծեց մեծարժեք գեղարվեստական գործեր, որոնք իրենց արտայայտությունը գտան հայ գրականության մեջ։ Բայց սա շրջափակվեց միայն գրական շրջանակներում և իր եռասպիտ, բազմաբնակություններ ու կյանքը ազգերից արևմտահայերի ազատագրության գործին։

Այսպես անդրադառնանք Արփիարյանին առնչվող մի կնճռոտ հարցին միայն. դա նրա մատնության առասպելն է, որ հորինվեց XIX դ. 90-ական թվականներին և հետագայում ամրապնդվեց դաշնակցական ստանալի ու գրականության մեջ։ Ցավոք, ժամանակակից մատենագրության մեջ կան հոդվածներ, որտեղ Արփիարյանի մասին խոսում են որպես կայացած մատնիչ։

Տեսնենք ճշմարտությունը վերհանելու համար անհրաժեշտ է, խորասուզվել անցյալ դարի վերջին տասնամյակին արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում։ Ինչպես իրավիճակը, քաղաքական կուսակցությունների գործունեությունների մեջ։ 1890-ական թվականներին արևմտահայ քաղաքական կյանքի գործուն ուժը հնչակյաններն էին, որոնց շարքերում էր նաև Արփիարյանը։ 1890 թ. հուլիսի 15-ի՝ հնչակյանների գլխավորած Կում-Կափուի ցույցից հետո, մի շարք տեղամաս թալան ձերբակալվեց նաև Արփիարյանը։ 1891 թ. հունվարին, բանտից ազատվելուց հետո, հանձնված հրապարակախոս և փաստաբան Հովհ. Շահնազարի հրավերով նա սանձնեց «Հայրենիք» խմբագրության պաշտոնը։ Արփիարյանի խմբագրությամբ «Հայրենիքը» դարձավ արևմտահայ պարբերական մամուլի առաջատարտիկը, հնչակյանների մարտական ուժի խոսափողը։ Պոլսում։ 1890 թ. քաղաքական պայքարի ասպարեզ մտավ ՀՀԴ կուսակցությունը, որն առաջ քաշեց թուրքական բռնապետության դեմ ազգայի-ազատագրական պայքարի, հայկական հարցի լուծման իր մշակած ուղիները։ Նախկին դաշնակցության և հնչակյանների միջև առաջացան գաղափարական տարաձայնություններ, որոնք հետագայում ավելի խորացան ի դժբախտություն մեր ազգային-ազատագրական պայքարի։ 1893 թ. սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ հնչակյանների հակաթուրքական նոր ելույթը՝ Բաբ Ալիի ցույցը, որը նպատակ ուներ ճնշում գործադրել սուլթանի վրա՝ իրագործելու մայիսյան բարենորոգումների ծրագիրը։ Չնայած սուլթանի առերես համաձայնությանը, այնուամենայնիվ, ծրագիրը մնաց թղթի վրա, իսկ գավառներում կազմակերպվեցին նոր կոտորածներ։ Այս պայմաններում Կ. Պոլսի դաշնակցական կոմիտեն որոշեց ներգործել մայրաքաղաքի հայերեն թերթերի վրա և, իբրև բողոքի նշան, ստիպեց դադարեցնել վերջինների հրատարակումը։ Կոմիտեն իր ուշադրությունը կենտրոնացրեց «Հայրենիքի» վրա, որն ամենաազդեցիկ հայերեն պարբերականն էր Պոլսում։ 1895 թ. նոյեմբերի 13-ին Պոլսի դաշնակցական կոմիտեն «Արևելք», «Հայրենիք» և «Ճերիտիե Շարգիե» թերթերի խմբագրություններից վերջնագրի ձևով պահանջեց դադարեցնել իրենց գործունեությունը այն պատճառաբանությամբ, որ նրանք իրենց թերթերում տպագրում են թուրքական կառավարության «պաշտոնական գեկուցումներ»։ Հակառակ դեպքում՝ կոմի-

1 Տե՛ս Երկիր, 14. VII. 1993։

տեն սպառնաց վրեժխնդրությամբ։ «Հայրենիքը» իբրև դաշնակցության հետ կապ չունեցող և անկախ լեգալ հրատարակություն, չկատարեց այդ պահանջը։ Երբ Պոլսի դաշնակցական կոմիտեն թերթերում տպագրվող, կառավարության կողմից պարտադրված «պաշտոնական զեկույցները» դիտում էր որպես ազգակործան ընթացք և մամուլի յուրօրինակ ցույցով փորձում էր դրավել Եվրոպայի ուշադրությունը, ապա հնչակյանները և մասնավորապես Արփիարյանը գտնում էին, որ այդ արարքը ոչ միայն չի հարուցի մեծ սերությունների դիվանագիտական միջամտություն, այլև նորանոր հալածանքների առիթ կծառայի։ Այս կապակցությամբ Ստեփան Շահպազը գրում է. «Դժվարավ կրնամ երևակայել խղճամիտ, իր ժողովրդին ապահովությունը սիրող դիտակրց հայ խմբագիր մը, որ համիդյան այդ սարսափելի օրերուն ստածեր մերժել հրապարակությունը կառավարության պատրաստած հայտարարությանց, փոխարենը ստանալու համար դուցե կարգ մը հայոց աչքին սնամեջ «հերոսի» մը տիտղոսը, բայց ի դին նաև, որ վստահարար նոր հալածանքներու, նոր ջարդերու ալ մանավանդ։ Իսկ եթե կոմիտեն կիսորհեր թե այդ հրապարակությունները կրնային Եվրոպայի հանրային կարծիքը հրմնել—չարաչար կսխալի։ Բազմաթիվ իրողություններու լույսին տակ դիտենք արդարև, թե Եվրոպան ինքն ալ իր կարդին գիտեր իրականությունը և պետք չուներ ուրեմն մեր թերթերուն դրածները իմանալու իր կարծիքը կազմելու համար Թուրքիո մեջ տեղի ունեցող պատահարներուն մասին։ Եվրոպան գիտեր նաև, որ համիդյան շրջանին բոլոր «գովեստ ու հավատարմության» հրապարակությունները Թուրքիո մեջ վախի ու բռնության տակ կծնվեն»[2]։ Այս ճշմարտությունները դիտեին նաև դաշնակցականները, բայց ասեն դեպքում առաջ են մղվում կուսակցական խնդիրները ու շահերը։ Կրեժխնդրությունը երկար սպասեցնել չտվեց։ 1895 թ. դեկտեմբերի 20-ին դաշնակցականները մահափորձ կազմակերպեցին Արփիարյանի դեմ։ «Արփիար հակառակ իր ստացած ծանր վերքերուն, կրցած էր սակայն մինչև տուն հասնել ուր և կորցնում է գիտակցությունը։ Տոքտոր Ջոնրապ, որ սոտերը կրնակեր, իսկույն կանչված էր և նախնական դարմանները տրված»[3],—գրում է Ե. Օտյանը։

Ապաքինվելուց հետո Արփիարյանը մեկնեց Եվրոպա, որովհետև Պոլսում մնալն այլևս անհնար էր։ Լոնդոնում մեծ դժվարությունների գնով նա հիմնում է «Մարտ» թերթը և «Նոր կյանք» հանդեսը ու շարունակում իր քաղաքական գործունեությունը՝ արդեն որպես վերակազմյալ հնչակյան կուսակցության ղեկավար։ Վերակազմյալները իրենց առաջնորդ Արփիարյանի գլխավորությամբ, բացի հին հնչակյան կենտրոնից, նաև գաղափարական պայքար էին մղում դաշնակցականների դեմ՝ չհամաձայնվելով նրանց պայքարի առանձին մեթոդներին ու դրույթներին։ Հանձինս Արփիարյանի, Պոլսի դաշնակցականները տեսնում էին իրենց վտանգավոր մրցակցին և նրա դեմ պայքարը ավելի շուտ էին սկսել։ Դեռևս մինչև Բաբ Ալիի ցույցը, 1895 թ. սեպտեմբերի 15-ին, ՀՀԴ կենտրոնական կոմիտեն «Դրոշակի» մեջ գրում էր, որ ձեռք է բերել 1890 թ. հուլիսին Գում-Գափուի ցույցին մասնակցած մի շարք անձանց մատնությունն ապացուցող նյութեր, որոնք պետք է հրապարակվեն հետագայում[4]։ Ըստ 1899 թ. դեկտեմբերի 15-ին «Դրոշակի» հավելվածում հրապարակված նյութերի, բանտում գտնված ժամանակ Արփիարյանը մատնել էր Ազգային երեսփոխանական ժողովի ատենապետ Հարությունն Թիրյաքյանին, Խորեն Նար-Պեյին, Մինաս Ջերազին, Տատյան Վահրամ և Տրդատ պեյերին և այլն[5]։ Բերված են նաև այլ «փաստեր», որոնք իբր ապացուցում են նրա դրամաշորթությունը, թուրքական

2 Ս տ. Շ ա հ պ ա զ, Արփիար Արփիարյան, Բեյրութ, 1988, էջ 354։

3 Ե. Օ տ յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 48։

4 Դրոշակ, 15. IX. 1895։

5 Դրոշակի հավելված, 15. XII. 1899։

ոստիկանության գործակալ լինելը և այլն։ Մեղադրանքներից մեկն էլ Արփիարյանի հանրածանոթ «Մեղայագիրն» է։ Դուս-Դափուր ցույցից հետո, 1890 թ. նոյեմբերի 9-ին, Արփիարյանը ձերբակալվեց։ 1891 թ. հունվարի 5-ին 76 հոգի ազատ արձակվեցին, որոնց թվում էին Տատյան Վահրամ և Տրդատ պեյերը, Հ. Թիրյաքյանը։ Բոլոր 76 հոգին բանտից դուրս գալուց հետո ուղիղ տարվում են Կ. Պոլսի ս. Խաչ եկեղեցի, որտեղ ոստիկանության նախարար Նազըմ պեյի և պատրիարքի ներկայությամբ հանդիսավոր կերպով հավատարմության երդում են տալիս և արտասանում «Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա»։ Հունվարի 6-ին ազատվում է նաև Արփիարյանը, իսկ մի քանի օր անց «Արևելքում» հրապարակվում է «Մեղայագիրը» նրա ստորագրությամբ. «Երախտագիտական արտահայտություն առ վեհափառ սուլթանիս»[6] վերնագիրն արդեն իսկ հուշում է «Մեղայագրի» բովանդակությունը, սակայն չի կարելի չնկատել այն, որ սուլթանին փառաբանող դարձվածները ոչ այլ ինչ էին, եթե ոչ սովորական և պարտադիր ստանդարտ։ Ինչևէ, «Մեղայագիրը» ծանր տպավորություն գործեց հանրային կարծիքի վրա։ Բանտից ազատվելուց հետո Արփիարյանի համար ստեղծվել էր բավական ծանր կացություն։ Ե. Օտյանը, որն Արփիարյանի բարեկամն էր, գրում է. «Արփիար բանտեն ազատելեն ետքը «Արևելքի» մեջ կորսնցուցած էր իր առաջին դիրքն ու հեղինակությունը և տեսակ մը շահարկության մեջ ինկած»[7]։

Այդ պայմաններում Արփիարյանին օգնության ձեռք մեկնեց «Հայրենիքի» հրատարակիչ Հովհ. Շահնազարը՝ իր հատուկ հրավերով։ Չնայած Արփիարյանի հակառակորդների բոլոր փորձերին՝ «Մեղայագիրը» ներկայացնել որպես նրա մատնչությունն ապացուցող փաստաթուղթ, այնուամենայնիվ, ինչպես գրում է Շահպազը, «Իրականության մեջ փառաբանության ամենեն ձապաղ գրություն մըն է այս, որուն մեկ հապճեպ ընթերցումն իսկ ցույց կուտա թե ան դավաճանության որևէ մտածում, ակնարկ չի պարունակեր, այլ սուլթանին ավելի քան չափազանցված ներբողը կընե միայն»[8]։ Գառնիկ Ստեփանյանն այն համարում է մի «պամֆլետ սուլթանի հասցեին»[9], իսկ Ա. Չոպանյանը գտնում է, որ «Մեղայագիրը» Արփիարյանի բարոյական տկարացման տխուր վայրկյանի ծնունդն է միայն, որը երբեք չի կարող նրա մատնչության ապացույց լինել[10]։ Արփիարյանին մեղադրում էին նաև, թե իբր Նազըմ պեյի լրտեսն էր և ամսական 30 ոսկի վարձատրություն էր ստանում, թե դրամական յուրացումներ է արել «Արարատյան» ընկերությունից, թե յուրացրել է նաև Զեյթունի ապստամբությանն օգնելու համար Գրիգոր Արծրունու տված 100 ոսկին և այլն և այլն... «Դրոշակի» հավելվածում հրապարակված «Փաստաթուղթը» ժամանակի առաջադեմ մտավորականության շատ ներկայացուցիչների կողմից քննադատվեց որպես կեղծ, չինծու։ Գր. Զոհրապը, Տ. Կամսարականը, Ե. Օտյանը, Ա. Չոպանյանը և ուրիշներ իրենց ձայնը բարձրացրին այդ խայտառակ և անպատվաբեր զրպարտությունների դեմ՝ ի պաշտպանություն Արփիարյանի։ Ա. Չոպանյանը գրում է. «Զրույցը հանողները զայն կուղղեին ոչ միայն Արփիարյանի անձին դեմ, այլ ամբողջ «Հայրենիք» լրագրին դեմ և ամբողջ Հնչակյան կուսակցության դեմ։ Այդ միջոցին Հնչակյան կուսակցությունը միակ ազդեցիկն ու հռչակավորն էր Տաճկաստանի, ինչպես նաև Եվրոպայի մեջ և մանավանդ Պոլսո մեջ։ Արփիարյան Պոլսո դաշնակցական վարիչները ամենեն ավելի նեղող մարդն էր...»[11]։ Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ այդ ժամանակ Արփիար-

---

6 Արևելք, 4. V. 1891։

7 Ե. Օտյան, նշվ. աշխ., էջ 24։

8 Ստ. Շահպազ, նշվ. աշխ., էջ 257։

9 Գառնիկ Ստեփանյան, Արփիար Արփիարյան, Ե., 1955, էջ 218։

10 Անահիտ, 1901, № 2, էջ 42։

11 Նույն տեղում։

յանի ու Զոպանյանի հարաբերությունները բավականին սրված էին գաղափարական տարաձայնությունների պատճառով. սակայն լինելով ազնիվ ու համարձակ, Զոպանյանն իր պարտքն է համարում վեր բարձրանալ նեղ, անհատական վեճերի մակարդակից և ցույց տալ Արփիարյանի դեմ ծավալված պայքարի ողջ անբարոյականությունը: Արփիարյանի դեմ պայքարում դաշնակցությունն օգտագործել է «Հայրենիքի» աշխատակիցներից Մելքոն Կյուրճյանին («Հրանտ»): Լինելով դաշնակցական, Հրանտը Զոպանյանին առաջարկում է համագործակցել ընդդեմ Արփիարյանի և հնչակյանների, բայց մերժվում է: Զոպանյանը գրում է. «Երբեք չպիտի մոռնամ այդ ծիծաղելի ու գռեհիկ մարդուկին հետ այդ օրը ունեցած տեսարանս, երբ կաս-կարմիր կտրած կգոչեր. «Հայրենիքով» առաջին փարա կվաստակին կոր և մեզի չեն ի տա կոր. հարձակինք իրենց վրա, կոտրենք այդ թերթին վարկը, որ խախտած է արդեն, «Մասիսը» «Հայրենիքին» տեղը պիտի բռնե և հազարավոր բաժանորդներ պիտի ունենանք. բոլոր դաշնակցականները մեզի հետ պիտի ըլլան»...:

Մերժեցի այդ աղտոտ հաշիվին մարդը ըլլալ: Այդ օրեն մեկ կամ երկու ամիս հետո էր, որ մատնիչին պատմությունը մեջտեղ նետվեցավ»[12]:

Զոպանյանի հաջորդ վկայությունը Արփիարյանի ու Հրանտի միջև կայացած վեճի մասին է. «Հրանտ կուզեր, որ «Հայրենիքի» մեջ ազդը տալեն գրքույկի մը, որուն հեղինակն էր ոմն Թութունճիև: Արփիարյան մերժած էր հրատարակել ազդը. ատկից շաբաթ մը հետո Հրանտ զրույց հաննեց թե Թութունճիեֆին միջոցով ձեռք գցած է Արփիարյանի հարցաքննության թղթերը, որոնք կապացուցանեին, թե Արփիարյան մատնած ըլլա Վ. Ծատյանը, Հ. Խիրյաքյանը և ուրիշները»[13]: Իսկ թե ինչու էր դաշնակցությունը հատկապես Հրանտին ընտրել այդ գործի համար, Արփիարյանը հետևյալ կերպ է պարզաբանում. «Յուսուֆյան (Պոլսի դաշնակցական կոմիտեի ղեկավարն էր) և իր ընկերները հուսացին, թե Կյուրճյան կրնար 1890-ին ինծի հետ ունեցած գործակցությունեն (այդ թվին Կյուրճյանը Արփիարյանի հետ մասնակցել է հեղափոխական խմբի գործունեությանը—Գ. Հ.) պահած հիշատակները խարդախելով իրենց գործիք ըլլալ ճեղծարարության դավի մը, որուն միայն կակնկալեին իմ կործանումս»[14]:

Միայն Արփիարյանի եղբոր և մոր նամակները բավական են հերքելու այն զրպարտությունը, թե իբր նա թուրքական ոստիկանության լրտես էր և Նազըմի գործակալը: Քննարկենք դրանցից երկուսը: 1898 թ. Եգիպտոսից Պոլիս վերադարձավ Տիգրան Արփիարյանը: Թեև նա կառավարությունից զգուշանալու կամ թաքնվելու պատճառ չուներ, որովհետև պահպանողական հայացքների տեր հրապարակախոս էր և հեղափոխական (քաղաքական) գործունեությամբ չէր զբաղվել, բայց Պոլիս հասնելուն պես ձերբակալվում է: Պատճառը պարզաբանում է մյուս եղբայրը՝ Ալեքսան Արփիարյանը 1898 թ. մայիսի 12-ին Արփիարին ուղղված նամակում. «Տիգրանը տակավին բանտն է 17 օր է ի վեր. բանտարկության գլխավոր պատճառ կնկատվի 12—13 օր Ալեքսանդրիա մնալն ու կգտնվեիր և դուն Տիգրանին վրա որևէ ամբաստանություն մը չկա, այլ լոկ կասկած մը, թե քեզի հետ տեսնված ըլլա: Որևէ բան մի գրեր, որով մեր վիճակը կծանրացնես, ասոնք քեզի հանձնարարելու պետք չունիմ»[15]:

Զգուշության համար Ալեքսանը նամակն ուղարկում է Մարսել՝ բարեկամի հասցեով: Կա մեկ ուրիշ նամակ ևս՝ գրված Արփիարի մոր կողմից, 1900 թ.

---

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում:

14 Մարտ, 19. VI. 1897:

15 Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ա. Արփիարյանի ֆ. № 167:

մարտի 15-ին, որտեղ մայրը որդուն հորդորում է որևէ բան չգրել և իր գոյությունը գաղտնի պահել թուրքական կառավարությունից[16]։

Եթե թուրքական ոստիկանությունը նույնիսկ Հարազատի հետ Արփիարյանի տեսակցությունը վտանգավոր էր համարում, ապա դա արդեն պարզորոշ վկայում է, որ Արփիարյանը չէր կարող լրտես լինել։ Վերջապես, Արփիարյանի անմեղությունն ապացուցում է այն հոգեբանական-բարոյական անկախությունը, որ նա պահպանեց աղքատության մեջ անցկացրած իր ողջ կյանքի ընթացքում։

Հարց է ծագում՝ հապա ուր մնաց այն 30 ոսկին, որ նա ամեն ամիս ստանում էր իբրև լրտեսության վարձ (այն ժամանակ դա զգալի գումար էր)։ Թվում է, որ գումարի չափը (30 ոսկի) ևս հորինվածք է, ավետարանական հայտնի սյուժեն բացահայտորեն ակնարկելու միջոց։

Արփիարյանի դեմ գլխավոր մեղադրանքը Դաշնակցության կողմից մեջտեղ բերված նրա հարցաքննության ատենագրությունն է, որն իբր ձեռք էր բերել Հրանդը։ Լինելով հմուտ փաստաբան, Ստ. Շահպազը մանրամասնորեն ցույց է տալիս այդ փաստաթղթերի ողջ կեղծիքը, միաժամանակ ընդգծելով, որ այն կազմված է խիստ ցածր մակարդակով։ Նա գրում է. «Վերոհիշյալ ատենագրության հեղինակը տեղյակ չլլալով խնդրո առարկա եղող օրինական, անհրաժեշտ պայմաններուն մասին՝ գործած է այնպիսի թերուներ, որոնք կհաստատեն խակույն ու անհերքելի կերպով իր կեղծությունը»։

Նախ, «Դրոշակը» չի հրապարակել ատենագրության թուրքերեն տարբերակը, այսինքն՝ բնագիրը։ Այս հանգամանքի առթիվ «Դրոշակի» բացարձակությունը արդեն կասկածելի է։ Չկա հարցաքննողի ստորագրությունը, որը հարցաքննության տարրական պայման է։ Երեք հարցաքննությունների տակ էլ, որոնք թվագրված են 1890 թ. նոյեմբերի 11, 22 և դեկտեմբերի 12-ին, միայն Արփիարյանի ստորագրությունն է։

«Արդարև, սովորական է անշուշտ,—գրում է Շահպազը,—ձերբակալյալի մը սպառնալիքներ ընելը, վարձատրության խոստումներ տալը, բայց այս տեսակ սպառնալիքներն ու խոստումները երբեք չեն արձանագրեր ատենագրության մեջ»[17]։ Մինչդեռ «Հարցաքննության ատենագրության» մեջ պարզորոշ նշված են խոստումներն ու սպառնալիքները։ Մի կարևոր հանգամանք ևս. քննիչը չէր կարող չհետաքրքրվել, թե բանտարկվածներից բացի, ովքեր են մնացել ազատության մեջ։ Ատենագրության մեջ դա ևս բացակայում է։ Եթե իրականում Արփիարյանը մատնել էր Վահրամ պեյ Տատյանին, Նարպեյին, բժիշկ Թիրյաքյանին, ապա ինչու նրանցից ոչ ոք չի հարցաքննվում։ «Ել ինչ որ երբեք բնական չի թվիր, Նալըմ պեյ այս երկու բանտարկյալները չի կանչեր, մանավանդ զանոնք Արփիարյանին հետ դեմ դիմաց հանելու պատմական հարցաքննության մեջ շատ սովորական միջոց մըն է այս։ Այս անտարբերությունը, անշարժությունը աննորմալ են մանավանդ համիդյան ռեժիմին ոստիկանության կողմե»[18]։

Երրորդ, «Հարցաքննությունը» կազմված 1890 թ.՝ դեկտեմբերի 12-ին, կարճ է և մատնությունները Արփիարյանին չեն վերագրված։ «Բայց այն կհայտնե գոնե անուղղակի կերպով բան մը. թե հակառակ անոր, որ երկրորդ հարցաքննությունեն ի վեր 20 օրեր անցած են, այս երկար ժամանակամիջոցին մեջ ոստիկանությունը տեղեն չէ շարժած Արփիարյանի «դավաճանած», «լրտեսած» հայերու դեմ»[19]։ Բայց հիշյալ արձանագրությունից, «Դրոշակի» խմբագրությունը հրապարակում է զանազան երկար «ծանոթություններ»։

---

16 Նույն տեղում, ֆ. № 168։

17 Ս տ. Շ ա հ պ ա զ, նշվ. աշխ., էջ 272։

18 Նույն տեղում, էջ 279։

19 Նույն տեղում։

Շահպազը ձանձրալի գործ է համարում այդ վկայությունները մեկ առ մեկ հերքելը, որովհետև «այնքան տղայական, հաճախ ծիծաղելի, ինչպես նաև հայտնորեն պառավական են դրանք»։ Սակայն մի քանիսին անդրադառնում է «հեղինակների մտայնությունը և կիրքը ցույց տալու համար, «թե մինչև ուր կրնան քշել իրենց քենը, երբ կորոշեն հալածել հակառակորդ մը»[20]։ «Դրոշակն» իր ծանոթության մեջ գրում է. «Բժիշկ Հարություն Թիրյաքյանի ձերբակալության պարագաները, որ ինքն իսկ պատմած է մեր ընկերներեն Գ-ին, ...հայտնորեն կցուցնեն, թե մատնությունը ուրկե եկած է ինքը... կասկածներ ունի պ. Արփիարյանի՝ իր անձին նկատմամբ ըրած մատնության վրա, բայց խոհեմություն չի համարեր խզել իր բարեկամական հարաբերությունները Արփիարյանի հետ, վախնալով իր դեմ նոր փորձանք բերելե»[21]։ Թե ով է Գ-ն, անունը չկա։ Այդ ժամանակ Թիրյաքյանի ու Արփիարյանի հարաբերությունները եղել են բարեկամական և Թիրյաքյանը դժվար թե այնքան անխոհեմ լիներ, որ նման հայտարարությամբ ավելի վշտացներ Արփիարյանին։ 1900 թ. օգոստոսի 1-ին Արփիարյանին ուղղված նամակում Չոպանյանը գրում է, որ ինքը հանդիպել է Թիրյաքյանին և հարցուփորձ արել Արփիարյանի մասին։ Թիրյաքյանն ասել է, որ ինքն անձնապես ոչ մի փաստ չունի, հետևաբար չի կարող Արփիարյանին մեղադրել մատնիչի դեր[22]։ Չոպանյանը նույնիսկ Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանում ընդհատում է իր դասը և մերկացնում Արփիարյանի զրպարտիչներին, չնայած այն բանին, որ Մելքոն Կյուրճյանը սպառնացել էր հաշվեհարդար տեսնել նրա հետ։ Ցավոք, չնայած մամուլի, հասարակության, բարեկամների ու ընկերների խնդրանքներին ու պահանջներին, այնուամենայնիվ Թիրյաքյանը երբեք հրապարակայնորեն հանդես չեկավ ո՛չ Արփիարյանին մեղադրելով, ո՛չ էլ մեղադրանքը հերքելով։ Դա մտորելու տեղիք է տալիս։ Արդյոք ավելի ճշմարտանման չի՞ այն, որ իրականում Թիրյաքյանը ոչ թե Արփիարյանից էր վախենում, այլ նրանից, որ դաշնակցականները կարող էին իրեն չներել, եթե ինքը հրապարակայնորեն հերքեր զրպարտությունները, մանավանդ, որ ահաբեկչությունը սովորական երևույթ էր դարձել այդ տարիներին։ Երբ հրապարակվեց «Դրոշակի» հավելվածը, ամեն կողմից պահանջեցին Պատվո ատյան կազմել անկողմնակալ ձևով ճշմարտությունը վերհանելու համար։ Պաշտոնական հայտարարությամբ հանդես եկան վերակազմյալ հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունը, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Կիպրոսի հայ համայնքները՝ նամակներ ուղղելով «Դրոշակին» և «Մարտին»[23]։

1900 թ. մայիսին «Մարտում» Արփիարյանը գրում է. «Վեց տարվան լռութենեն հետո շատ տրտմիլ եմ՝ տեսնելով հայ ազգին արդարասիրության զգացումին պայթումը։ Չեմ ըսեր, թե վեց տարվան մեջ իբր որս մը ապրեցայ կեղծ մարտիրոսության մը լուսաշող պսակովը ճակատս պճնազարդելու տենչացող չեմ... Սակայն պետք է հիշեցնեմ, որ Պատվո ատյանի մը կազմությունը պահանջելու նախաձեռնությունը ունեցած եմ երկու անգամ. առաջինը 1895 թ. Պոլիս, երբ Մելքոն Կյուրճյանը իմ ներկայության ամբաստանելով փախուստ տվավ։ Երկրորդ անգամ, 1897 հունիս 23-ին, դաշնակցականներուն հետ միության խնդրին առթիվ։ Պահանջումս դարձյալ անպատասխան մնաց։ Հիմակ նախքան ատյանին կազմությունը պարտականություն ունիմ բացարձակ և վճռական հայտարարություններ ընելու. այդ հրատարակված թուղթերը առաջին տողեն մինչև վերջինը ամբողջապես կեղծավորություն է»[24]։

---

20 Նույն տեղում։

21 Դրոշակ, 15. XII., 1899։

22 Ս տ. Շ ա հ պ ա զ, նշվ. աշխ., էջ 281։

23 Մարտ, 8. III., 1900, 14. IV., 1900, 2. V., 1900.

24 Մարտ, 11. VI., 1900։

«Մարտի» վերոհիշյալ համարում հրապարակվում է Արփիարյանի «Կեղծավորության գործը» խորագրով հոդվածը, որտեղ նա գրում է. «Նախ ըսեմ, թե սխալեցան անոնք, որ զիս ամբաստանյալ մը կարծեցին։ Հայ ժողովուրդին առջև կներկայանամ ոչ թե իբրև ամբաստանյալ մը, այլ՝ ամբաստանող մը։ Բայց կուզեմ, որ մեկընդմիշտ ամեն հայ գիտենա, թե ես անձնապես ոչ պահանջած եմ, ոչ կպահանջեմ, ոչ ալ երբեք պիտի պահանջեմ, որ դաշնակցական կուսակցությունը հաստատե, թե ինչպես կրցած է ձեռք անցնել «Դրոշակի» մեջ իմ ստորագրությամբ հրապարակված պաշտոնական թուղթը։ Պատճառը շատ պարզ է։ Այդ հրատարակված թուղթը գոյություն չէ ունեցած. ուստի ոչ ոք ալ կրնա ուրիշին հանձնել թուղթ մը, որ գոյություն չունի»[25]։

Զնայած վերակազմյալ հնչակյանների, առաջադեմ մի շարք մտավորականների, արտասահմանյան երկրների հայ համայնքների բազմաթիվ դիմումների, «Դրոշակի» խմբագրությունը մերժեց որևէ վկայություն տալ Պատվո ատյանին, հայտարարելով, որ կուսակցությունը չի ընդունի որևէ նոր վճիռ այդ հարցի կապակցությամբ, և Կ. Պոլսի կոմիտեի վճիռը վերջնական է[26]։ Հետագայում վերակազմյալ հնչակյանների շարքերում տարաձայնությունների խորացումը հնարավորություն չտվեց ընթացք տալ այդ գործին։ Սակայն, ամեն դեպքում, Դաշնակցության կողմից Պատվո ատյանի մերժումը արդեն իսկ վկայում է հրապարակված «փաստերի» կեղծ լինելը։

Պետք է նշել այն կարևոր հանգամանքը, որ Արփիարյանի հարցում դաշնակցության առաջնորդները տարակարծիք էին։ Այդ կապակցությամբ Գառնիկ Մաղմանյանը վկայում էր. «1900-ին Փարիզեն Ժնև եկած էի Պուլկարիա վերադառնալու համար։ Հոն մնացի քանի մը օր։ Օր մը հանրային պարտեզը Ակնունիին հետ նստեր կխոսեինք։ Այն տեններր հրատարակված էր Արփիարի հարցաքննությունները։ Հարցուցի Ակնունիին, թե իրո՞ք Արփիարը մատնիչ կնկատե։ Հստակ բառերով ան հետևյալը պատասխանեց. «Ես ինքս չեմ հավատար, բայց մեր ընկերները այդպես համոզվեր են»[27]։

1900 թ. հոկտեմբերի 29-ին Արփիարյանին հասցեագրված նամակում Հ. Առաքելյանը գրում էր. «Մի քանի օր առաջ խոսեցի պ. Մալումյանի (Ակնունի—Ն. Հ.) հետ ձեր մասին և նա շատ ցավեց, որ դուք այդպիսի կարծիք ունեք նրա մասին, թե նա ձեր դեմ է. նա շատ հակառակ է եղել «Դրոշակի» հավելվածի տպման և աշխատել է թույլ չտալ, բայց չէ կարողացել»[28]։

1903 թ. մարտի 29-ին Վենետիկից Լեոյին հասցեագրված նամակում Արփիարյանը հետևյալն է հայտնում. «Իմ ծանոթ խնդրիս առթիվ ալ կգրեմ։ Պ-ն Մալումյանը ինքն ալ Ժնև պ-ն Շահնազարին հայտարարած է ու նամակով ալ գրած է, որ ինք երբեք չի հավատար ըսվածներուն»[29]։

Նույն կարծիքին էր նաև Մ. Վարանդյանը. նա իր տարակարծությունն էր հայտնել Քր. Միքայելյանին. «...Սակայն Յուսուֆյանի, Վռամյանի բազմաթիվ վկայությունները ու բացատրությունները բավականաչափ համոզիչ չէին և դժվար էր միայն նրանց վրա հենվելով հայ սերունդներու առջև հավիտենական անարգանքի ենթարկել մի անվանի գրողի ու հասարակական գործչի, դժվար էր հայրենավաճառ ու հայրենադավ լրտեսի ու մատնիչի անունը դրոշմել մի մարդու ճակտին, որ ամբողջ կյանքը սպասավորել էր հայրենիքին, արտակարգ եռանդով ու տաղանդով, իբրև գրող ու հրապարակագիր, իբրև աշխատակից «Մշակի» ու այլ թերթերի, իբրև կազմակերպիչ հայրենանվեր ընկերության, դեռ 70-ական թվ. հանդիսանալով թուրքահայ

25 Նույն տեղում։
26 Դրոշակ, 15. XII., 1900։
27 Սիածան, 1947, № 1—6, էջ 90։
28 ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. 133։
29 Նույն տեղում, ֆ. 120։

վերածնության ու հայկական դատի ամենախանդավառ ռահվիրաներից մեկն»[30]: Վարանդյանը բարեբախտություն էր համարում այն, որ տարիների անարդարացի թշնամությունից հետո Արփիարյանի սպանությունը իրագործվեց դաշնակցականի ձեռքով: Նա գրում էր, որ հին հնչակյանները ևս դատապարտեցին Արփիարին որպես Նազըմի ուտեսի. «Այդպես բոլոր սակայն, հնչակյան պառակտումից հետո, երբ Արփիարը այլևս կուսակցական ընկեր չէր, այլ հակառակորդ: Տեղիք կար, ուրեմն, բացարձակ հավատ չընծայելու «Հնչակի» մեղադրանքների անաչառության»,—շատ ճիշտ եզրակացնում էր Վարանդյանը[31]:

Արփիարյանի հարցում, սակայն, տարակարծություններ կային նաև հին հնչակյան գործիչների միջև: Օրինակ՝ Ռ. Խանազատը, որը լավ էր ճանաչում Արփիարյանին, գրում էր. «Արփիարյանի նկատմամբ կասկածներ ու կասկածներ էլ մնացին. ես գոնե ոչ մի դեպք չգիտեմ, որի համար ասեին, թե դա Արփիարի մատնության գործն է»[32]:

Կյանքի վերջին տարիներին Արփիարյանը հեռացավ կուսակցությունից և տեղափոխվեց Եգիպտոս, որտեղ հրատարակում էր «Շիրակ» և «Լուսաբեր» պարբերականները: Սակայն նա չմեկուսացավ ազգային-քաղաքական կյանքից: Նա պայքար էր մղում կուսակցությունների շարքերը թափանցած արկածախնդիրների դեմ, որոնք զբաղվելով ըեղծարարություններով, արատավորում էին թե՛ կուսակցությունների և թե ազգի պատիվը:

Արփիարյանի խոսքը մեծ ազդեցություն էր գործում և խափանում բախտախնդիրների շահադիտական նպատակները: Հենց դա էլ դարձավ նրա դեմ կատարված երրորդ մահափորձի պատճառը՝ իր մի քանի նախկին կուսակցական ընկերների կողմից: Արփիար Արփիարյանը սպանվեց Կահիրեում, 1908 թ. փետրվարի 12-ին: Ականատեսի վկայության համաձայն, նրա գրպաններում գտան մի քանի լրագիր, 6—7 ղրուշ և հացի չորացած կտոր[33]: Դաշնակցությունը, այնուամենայնիվ, հետագայում ևս Արփիարյանին շարունակեց մատնիչ համարել և չհրաժարվեց իր մեղադրանքներից: 1931 թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում «Ա. Արփիարյան» հոդվածով հանդես է գալիս Ս. Վրացյանը[34]: Այստեղ նա կրկին անդրադառնում է Արփիարյանի «դավաճանության, մատնությունների» արդեն շարչրկված հարցին: Զրեհելով ոչ մի նոր փաստ, կուսակցության շրջանակներից դուրս որևէ անձի վկայություն Արփիարյանի դեմ, բացառությամբ Մ. Կյուրճյանի, Վրացյանը հիմնվում է միայն «Դրոշակի» հրապարակած մեղադրանքների վրա: 1932 թ. մայիսին նույն ամսագրում հրապարակվում է նաև Մ. Կյուրճյանի «Ա. Արփիարյան» հոդվածը, որտեղ հեղինակը, չասելով նոր խոսք, միմիայն արտահայտում է իր նախանձն ու ատելությունը Արփիարյանի հանդեպ: Սակայն Վրացյանի հոդվածն անպատասխան չի մնում: Ա. Չոպանյանը «Անահիտ» հանդեսում հիմնավորապես հերքում է բոլոր զրպարտությունները[35]: 1931 թ. նոյեմբերի 4-ին Փարիզի «Առաջ» թերթում Արփիարյանին պաշտպանում է Վ. Բերբերյանը: Վրացյանի հոդվածի քննադատությամբ հանդես է գալիս Լ. Բաշալյանը[36]:

Ցավոք, զրպարտությունները թեկուզև հերքված, բացահայտված, բայց կատարեցին իրենց սև գործը և ստվեր նետեցին Արփիարյանի գործունեության վրա: Դա զգում էր և ինքը: Գուցե չգնահատված ու չարաչար զրպարտ-

30 Հայրենիք, 1924, № 8, էջ 136:

31 Նույն տեղում, էջ 135:

32 Մշակ, 24. IX., 1908:

33 Լ. Մուրադյան, Ա. Արփիարյան, կյանքը և ստեղծագործությունը. Ե., 1961, էջ 172:

34 Գ. Ստեփանյան, նշվ. աշխ., էջ 283:

35 Հայրենիք, 1931, № 11:

36 Անահիտ, 1931, № 3—1, էջ 175—186:

ված մարդու մտայնությամբ է Արփիարյանը մահից մի քանի ամիս առաջ «Քավության կանթեղ» խորագրով հոդվածում պատմել հետևյալ օրությը. «Վենետիկ, երբ Իրլ կուններ մուտք կկոխե, սուրբ Մարկոսին գմբեթին ներքև, հրապարակին վրա նայող անկյուն մը, կանթեղ մը կսկսի պրլպալ։ Հանրապետության օրով ոճրի մը առիթով հացավաճառ մը իբրև եղեռնագործ մահվան կդատապարտվի, խեղճը կախվելեն հետո անոր անմեղությունը կհայտնվի։ Անկե ի վեր հարյուրավոր տարիներեն Վենետիկը իր սխալումը քավելու խղճահարությամբ ամեն դիշեր կանթեղ մը կվառե անմեղին հոգուն»[37]։

Ա. Արփիարյանի ողջ գործունեությունը անցավ պայքարի մեջ։ Այդ պայքարում եղան նաև անկման պահեր։ Սակայն նրա թողած գրական-հրապարակախոսական մեծ արժեքները և դարը, շարունակական զոհողությունները լի կյանքը, որն ամբողջությամբ նվիրաբերվեց արևմտահայության ազատագրության գործին, նրա հոգու ազնվության և անմեղության լավագույն ապացույցներն են։

МИФ О «ПРЕДАТЕЛЬСТВЕ» А. АРПИАРЯНА

Г. А. ОГАНЕСЯН

Резюме

В конце 19-го века национально-освободительная борьба западных армян вступила в решающую стадию. В этой борьбе большую роль сыграл известный писатель, публицист и общественно-политический деятель Арпиар Арпиарян.

В то время руководящей и направляющей силой освободительной борьбы были армянские национальные партии Гнчакян и Дашнакцутюн. Имея одинаковые цели в вопросах тактики и средств борьбы они все же расходились во мнениях. Обострение этих разногласий привело к межпартийной борьбе в результате которой видный деятель Гнчакской партии Арпиар Арпиарян был представлен предателем и шпионом. Друзья и соратники А. Арпиаряна встали на его защиту, пытаясь опровергнуть эту клевету. Но, к сожалению, в печатных органах партии Дашнакцутюн продолжали обвинять Арпиаряна в предательстве и шпионаже. Однако на основе проведенных исследований можно заключить, что обвинения в адрес А. Арпиаряна были лживы и бездоказательны. Вся его жизнь была примером служения делу освобождения западных армян во имя их будущего и прогресса.

---

37 Ս. Հակոբյան, Արփիար Արփիարյան, Վիեննա, 1922, էջ 11։